ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1 (52)

2024 թ. մարտի 14-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրական խորհրդի նիստ՝ հարցման ընթացակարգով:

Խմբագրական խորհրդի անդամներին ուղարկվեցին հետևյալ բովանդակությամբ գրություններ.

«Հարգելի պարոն/տիկին ...

«Պատմաբանասիրական հանդես»-ի 2024 թ. № 1-ի բովանդակության հաստատմանը նվիրված խմբագրական խորհրդի նիստն անցկացնում ենք հարցման ընթացակարգով:

Խնդրում ենք գրավոր կամ բանավոր հայտնել Ձեր կարծիքը:

Կից՝ 3 թերթ»:

Հարցմանը գրավոր արձագանքեցին՝ Ա. Տոնապետյանը, Լ. արք. Զեքիյանը, Վ. Կատվալյանը, Ս. Մուրադյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը, Պ. Ավետիսյանը, Ա. Դոլուխանյանը, Ա. Տերյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Աբրահամյանը, Գ. Բարդակչյանը:

Հարցմանը բանավոր արձագանքեցին՝ Ա. Մելքոնյանը և Մ. Հասրաթյանը:

Խմբագրական խորհրդի անդամները դրական կարծիք հայտնեցին ներկայացված նյութերի առնչությամբ, կատարեցին որոշ դիտարկումներ տպագրվելիք հոդվածների վերնագրերի վերաբերյալ:

Կատարվեցին շտկումներ. որոշվեց հաստատել 2024 թ. №1-ի բովանդակությունը:

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր Ա. Զաքարյան